# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*2013թվականի հունվարի 22-ին Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ղեկավարի կիսամյակային հաշվետվությանը ներկա էին՝ մարզպետարանի ՏԻՄ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ՝ Գոռ Հովհաննիսյանը, համայնքի ավագանին, դպրոցի , մանկապարտեզի գյուղապետարանի աշխատակիցներ և համայնքի 55 բնակիչներ։*

*22 Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավարը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները։*

1. *Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում*

**01.07.2013թ- 31.12.2013թ** *ընթացքում գյուղապետարան է դիմել 65 բնակիչ , դիմումատուների հարցերին տրվել է լիարժեք պատասխան։ Գյուղապետարանը , համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով, իր միջնորդությամբ հանդես է եկել անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում, կադաստրային տարածքային ստորաբաժնում։*

*Համայնքում առաջին կիսամյակի ընթացքում կայացել է ավագանու 9 նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան։ Գյուղապետի կողմից կայացվել է տարբեր բնույթի 36 որոշումներ, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան։*

2. *Ֆինանսների բնագավառում*

*Տեղիսել է համայնքի 2013 թ. բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը:*

*ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*

1. *Հողի հարկ* 10698.1 *հազ. դրամ*
2. *Գույքահարկ* 2050.1 *հազ. դրամ*
3. *Գույքի վարձ. վճար* 1160.0*հազ. դրամ*
4. *Դոտացիա* 15715.6 *հազ.դրամ*
5. *Սուբվենցիա* 876.0 *հազ.դրամ*
6. *Տարեսկզբի ազատ մնացորդ* 19694.7 *հազ. դրամ*

*ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ*

*1.Տեղական ինքնակառավարում* 11579.3 *հազ. դրամ*

*2.Համայնքային այլ ծառայություն* 1669.8*հազ. դրամ*

*3.Կրթություն և մշակույթ* 1523.2 *հազ. դրամ*

*4. Սոց. օգնություն* 2230.0 *հազ. դրամ*

*5. Երիտասարդական ծրագրեր* 1200.0 *հազ. դրամ*

*6. Նախադպրոցական ուսուցում* 6060.0 *հազ. դրամ*

*7.աղբահանություն* 900.0 *հազ. դրամ*

*8. Համայնքային զարգացում* 14993.1 *հազ.դրամ*

*9.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն* 1500.0 *հազ.դրամ*

*10.Բնակարանային շինարարությու և կոմունալ ծառայ.* 995.0 *հազ.դրամ*

*11.Հանգստի և սպորտի ծառայ.* 400.0 *հազ. դրամ*

*Գյուղապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և եկամտային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:*

3. Պաշտպանության բնագավառում

Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ:

Հատուկ ուշադրություն է դարձվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը: Երիտասարդության շրջանում մեծ աշխատանքներ են տարվում ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:

4. Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Համայնքում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

5. Կոմունալ տնտեսություն և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է ամենշաբաթյա աղբահանում, որի համար կնքվել է ծառայությունների ձեռք բերման պայմանագիր՝ 1700.0 հազ. դրամ արժողությամբ : Գյուղապետարանը կենտրոնական փողոցի ջրահեռացման համակարգի և ասֆալտապատ ծածկույթի կապիտալ վերանորոգման համար ծախսել է 14993.1 հազ. դրամ:

6. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Գյուղապետարանը մանկապարտեզի աշխատակիցներին և սաներին հատկացրել է 150.0 հազ. դրամ՝ նվերների համար, 150.0 հազ. դրամ հատկացրել է առաջին դասարանցիներին նվերներ հատկացնելու համար, 400.0 հազ. դրամ ամանորյա նվերների համար, կազմակերպել է միջոցառում 2013թվականի շրջանավարտների համար, որի համար հատկացվել է 350.0 հազ. դրամ:

7. Սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Համայնքում կազմակերպվում է ըմբշամարտի պարապունքներ: Սոցիալապես անապահով և նորածին երեխաների ծնողներին տրվել է 1890.0 հազ. դրամ՝ որպես օգնություն:

8. Գյուղատնտեսության բնագավառում

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքաշրջանառության, պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի վերաբերյալ հաշվետվություններ:

Համայնքում կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

Հիմնախնդիրներ

1. Առատաշեն գյուղի հիմնական հիմնախնդիրը համարվում է խմելու ջուրը:
2. Ակնալիճ ջրանցքով ոռոգվող հողատարածքների ոռոգելու խնդիրը:

Համայնքի ղեկավար [signature] Վ.Հարությունյան